

ԻՐԱՎՈՒՆԿ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Ա. ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 9 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1896

ԹԻԻ 21

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Հերկայ 1896 տարեդրամի
Պոլիգրաֆիկ հասկար տարեկան 8 ֆր
" " 1/2 " 4 "
" " 1/4 " 2 "
Արտատպանների հասկար " 10 "
" " 1/2 " 5 "
Կանխիկ վճարելի

Նամակ դրամ եռայն խրկել հետեւեալ հասցեով
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՑ ՎԱՌՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
ևս չեն դրկուիր եւ յարմար դատ.
ոչաճեանք միայն կը հրատարակ.
ուրիւ ամբողջովին կամ մասամբ:

Դրանցմանց տողը 20 սանթիմ.
երկրէն աւելի անգամներու հաւասար
20 առ 100 զեղչ կը լինի:

ԹՈՒՐԳԻՈՅ ՄԵՋ

ԻՐԱՅ ՎԻՃԱԿԻՆ

ՊԱՆՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Գիւտնագիտութիւնը կը շարունակէ իր շարժումներն ու գործերը ծածկել թանձր քողի մը տակ զոր բարձր չընթանաներու և արտաքին գործոց պաշտօնատուներու հետ սերտ յարաբերութիւն մշակող լըրագիւտներն իսկ չեն կարող վեր առնել: Ասոնց սիւնակները լի են հայկական խնդրին վերաբերեալ տեսութիւններով, զորս լափելով կարգալէ ետք՝ նոր, ստոյգ բան մը իմացած չըլլալու տհաճութեամբ մէկ կողմ կը ձգենք թերթը:

Քաղաքական նշանաւոր անձնաւորութիւնաց ճառերն ալ նոյնպէս չեն գոհացներ մեր արդարացի ու բնական հետաքրքրութիւնը: Կլարաթիւն, Ռոզպէրի, Քրիզլըն հիփպիք և ուրիշներ իրարու ետեւ կը խօսին, առանց գրապէս մեզ ըսելու թէ ուր պիտի յանգի օրուան մեծագոյն խնդիրը:

Եւրոպա շաճապարիւր ալ. և ինչ որ հանգամանքներէն հետեւեալով մէկ օրէն միւսը անհրաժեշտաբար լուծելի մի խնդիր կը նկատենք, շարաթերթով ու ամիսներով կ'երկարաձգուի: Անցեալները եւրոպական լուրջ թերթ մը կը վստահացնէր մեզ թէ Հայկական խնդիրը մէկ շաբաթի մէջ պիտի ստանայ իր լուծումը. շաբաթը անցաւ. ոչ միայն խնդիրը չլուծուեցաւ, այլև տակաւին չկրցինք իմանալ թէ եւրոպա ինչ եղանակով մտադիր է զայն լուծել, և եթէ գիւտնագիտական գործունէութեան այս դանդաղութիւնը շարունակուի, տակաւին երկար ժամանակ պիտի մնանք մութ անստուգութեան մը մէջ:

Միայն մէկ կէտի մասին կրցինք որոշ անգեղութիւն ստանալ. Անգլիա մինակ չպիտի գործէ, ոչ ալ թուրքիոյ դէմ պատերազմ պիտի մղէ Հայերու համար: Բաց ի ուրիշներէ, Պ. Գրիզլըն, Անգլիոյ արտաքին գործոց նախարարութեան ներքաշարտուղարը, յայտարարեց զայս իր բանախօսութեան մէջ, զոր վերջերս արտասանեց ի Կլասքով: Անգլիոյ մէջ չկայ հեղինակ

կաւոր անձ մը որ ուզէ պատերազմի հրատարակութիւնը թուրքիոյ դէմ և Պ. Կլարաթիւն իսկ բացառութիւն չկազմեր այս մասին:

Ուրեմն ալ տարակոյտ չկայ որ Լորտ Սոլպէրիի գահիճին բոլոր ջանքերը նուիրուած էին և են աւրոպական համաձայնութիւն մը գոյացնելու նպատակին և կ'երևի որ իր ջանքերը ապարդիւն չեղան, վասն զի զանազան աղբիւրներէ բխած լուրեր կը հաստատեն թէ տէրութեանց մէջ կայացած է համաձայնութիւն մը, որոյ հիմերը տակաւին անժանօթ կը մնան:

Բայց ի՞նչ կրնան ըլլալ այդ հիմերը:

Թուրքիայի անգաղար կը յեղկեղեն մեզ թէ Ռուսիա, Ֆրանսա և Աւստրիա որոշած են թուրքիոյ արդի քաղաքական վիճակը (սխալմու գուօ) անփոփոխ պահել:

Պէտքէ՞ ուրեմն հետեւեալն որ Եւրոպա համաձայնած է թուրքիոյ դէմ բռնի միջոցներու չգիւտել և առանց Դրան քաղաքական ու վարչական ու և է մի իրաւասութեան դաշնելու, ինչպէս մինչև հիմայ, դարձեալ իրմէ ծանուցադրեալ պահանջն որ բարենորոգումները գործադրուին այն փրտած, ապականած, անանկացած ու կրօնամոլ վարչութեան ձեռքով, որոյ ամեն բնածիր, շնորհալի յատկութիւնները, ընդունակութիւնները ու տրամադրութիւնները պայծառափալ եկան երեւան Պոլսոյ վերջին շարժերուն ժամանակ և զարմացուցին բոլոր աշխարհը:

Կրնանք ընդունել որ Եւրոպա իր գեապաններուն բերնով թուրքիաւարութիւնը Պոլսոյ շարժերուն մէջ իրր մեղաւորից ամբաստանելէ ետք՝ միեւնոյն կառավարութեան սպասէ բարենորոգում և հայ ազգին կեանքին, պատուին և ինչքին պահպանութիւնը:

Այսպիսի կարգադրութիւն մը այնքան ծիծաղելի և անմիտ բան մը պիտի ըլլար որ չենք կարծիք ընալ թէ կարենայ տէրութեանց միջև բանակցութեան նիւթ եղած ըլլալ:

Երբ մինչև իսկ Նեոյէ Ֆրէյէ Բրէսէի նման աւստրիական թերթաւոր թերթ մը ալիւս կը ստիպուի խոստովանելու թէ թուրքիաւարութիւնը բացարձակապէս անընդունակ է բարենորոգուելու, կրնանք հաւատալ թէ համայն քաղաքակիրթ մարդկութեան խելոճն արթնցած կը բողբէ թուրքիոյ մէջ իրենց արդի կացութեան դէմ, զոր հետեւաբար անընական

կը թուի մեզ նմադրել թէ տէրութիւնները որոշած ըլլան անփոփոխ պահել:

Աշխարհի վրայ ամեն բան իր չափն ու սահմանը ունի. դիւանադիտական խաղերու և կեղծիքներու չափն ալ լեցուած է արդէն մեր խնդրին նկատմամբ:

Այս ամենէն զատ՝ պէտք չէ մոռնալ թէ ով որ թուրքիոյն բարենորոգում կը պահանջէ, պարտի նախապէս մոծաքանակ փոխադրութիւններով անոր երեւոյթական ծաղրագոյն տաղնապը մէջ տեղէ բառնալ, որովհետև եթէ Դրան իրօք կամք և ընդունակութիւն ունենար բարենորոգումներ ներմուծելու, վարչական ամեն անտուկներու սոսկալի դատարկութիւնը անկարելի պիտի ընէր անոնց գործադրութիւնը:

Եւրոպական դրամատուները պիտի տան շարժաւոր դրամը, երբ ամեն ոք գիտէ թէ Եւրոպայի պահանջած բարենորոգումները թուրքիոյ երբեք չպիտի գործադրէ, երբ պետական հատոյթներու այն մասը որ լնդհ. պարտուց վարչութեան ձեռքը անցած չէ գնաւ, անգանձելի դարցած է երկրին տնտեսական աւերման պատճառով, երբ վերջապէս ակնհայտ կը տեսնուի որ թուրքիա հակադրաբար կը շարունայ իր անխուսափելի կորուստին:

Եւրոպա ի՞նչ պիտի պատասխանէ Դրան. եթէ սա ըսէ անոր դիւանադէտներուն:

— Պարոններ, քանի որ բարենորոգումներ կը պահանջէք, որ իմ ալ անկեղծ և ջերմ փափաքս է, պէտք է որ ձեր փոխադրութեան հնարաւոր ընէք ինձ կատարել ձեր պահանջը, կամ, սովորեցնէք ինձ դատարկ գանձով մը բարենորոգելու վարչութիւն մը յորինելու գաղափրքը:

Այս ամեն նկատուութիւններէն ետք՝ եթէ մտաբերենք նաեւ թէ որքան եւրոպական մեծ շահեր անխուսափելի կորուստի մը կը մատնուին թուրքական գործերու այս կացութեան յարատեւութեամբը, կը ստիպուինք սա համազման յանգիւթ թէ կամ եւրոպական համաձայնութիւնը տարբեր հիմերով վրայ կայացած է, կամ ընտել կայ այդ պիտի համաձայնութիւն մը:

Մակայն իրերու ներկայ վիճակին պահպանութիւնը գիւտնագիտական լեզուով իրարմէ տարբեր քանի մը նշանակութիւններ ունի. շատ առաձգական է այդ բացատրութեան իմաստը: Քաղաքագիտական տեսակէտով վիճակը հիմնական փոփոխութիւն մը կրած

չըլլար, եթէ Հայաստան տեղական վարչային նուազ կամ առաւել ընդարձակ ինքնավարութեամբ մը օժտուի, կամ, եթէ եւրոպական հակոյղութեան տակ գրուի բարենորոգմանց գործադրութիւնը, որովհետև այսօրինակ կարգադրութեամբ մը թուրքիոյ գերագոյն վեհապետութիւնը դարձեալ վերապահուած կը մնայ Սուլթանին:

Աւելի բնական կը գտնեմք այս իմաստով հասկնալ իրաց վիճակին պահպանման մասին Եւրոպայի որոշումը, քան երկադրել որ նա այսուհետեւ ալ ուղղակի Դրան պիտի սպասէ վիճակին բարեփոխումը:

ԱՆԳԼԻԱՅԻ ԿԻՆԵՐԸ

Ի ՆՊԱՍՏ ՀԱՅՈՑ

Ոչիքոյ Ռոպիտի կանանց խնդրին վերապահեալ բաժնին մէջ կը կարգանք հետեւեալը:

— Մեզմէ ոմանք խորհեցան որ լուր կըլլար Չարուհիէն տնտեսգութիւն մը խնդրել և իրեն աղաչել որ իր աղքատութիւնը գործածէ հայկական կոտորածները դադարեցնելու համար:

Ն. վեհափառութիւնը յօժարեցաւ մեզ ունկնդրութիւն մը շնորհել, պայմանով որ զայն գաղտնի պահենք մինչև իր մեկնումը Անգլիայէն: Հետեւաբար սակէ տանը օր յառաջ, կէս օրէն ետք, ես և մեր ընկերուհիներէն երկուքը, զընտանիք Պալմարայ: Նորոտի կայաբուհին մեզ ընդունեց արժանաւոր կերպով:

Քանի մը խօսքով իրեն բացատրեցի մեր գիմումին նպատակը:

Չարուհի պատասխանեց թէ ինք մինչև հիմայ քաղաքական գործերու շատ քիչ անգամ խառնուած է, բայց բոլորովին ինքզինք պատրաստ յայտարարեց ջանք չլինայել Պոլսոյ մէջ պատահած բաներուն դէմ խաչակրութիւն մը յարուցանելու համար:

— Դժուարին է, յարեց կայաբուհին, երեւակայել աւելի քրիստոնէական բան մը, քան նպատակ դժբաղդ Հայերուն շարժարանները ամօքելու: Վստահ եղէք, որ ձեր սիրտին այնքան մօտ եղող այս դատին կը համակրիմ ջերմապէս:

Փ Ա Ւ Ս Տ Ա Կ Ա Ն Ի

Տ Պ Ա Ի Ո Ր Ո Ւ Ի Թ Ի Ի Ն

(Շարուն. հախարդ բիւլետեն և վերջ :)

Վառնայի նաւամատոյցին վրայ կուրծքիս բովանդակ ուժովը շունչ մը առի, ազատութեան անճառ շունչը, որուն երանաւէտ հանգա մանքին վրայ կարծեմ երբեք գաղափար չունին մարդկային այն հէք արարածները որոնք թուրքիոյ հեղձուցիչ մթնոլորտին տակ ապրելու դժբախտութիւնն ունին :

Ինչ և է, ոչխարներու պէս մաւ կողեցանք նաւամատոյցին ծայրը, պուլկար հոկայ գինուորի մը հըս. կողմութեան ներքեւ : Թէեւ ցուրտ հով մը սսկորնիս կը սառեցնէր, բայց մեր սրտերը ջնուցանող տաքութիւնը կը չեղոքացնէր ամեն բան : Երբ բոլոր գաղթականները շոգնեալէն փոխադրուեցան նաւամատոյցին վրայ, ու ամեն մարդ կը սպասէր թէ ուր պիտի երթայ, դարձեալ բարձրացաւ կիւլպէսէր ազայի ուժիղ ձայնը, որ կը ծանուցանէր թէ այլեւս ազատ երկրի մէջ ենք, թէ, սակայն, պարկեշտութեան և հնազանդութեան շաւղէն հեռանալու չենք և երախտապարտ ըլլալու ենք այն կառավարութեան որ մեզի իր գոգը կ'ընդունէր, և թէ, վերջապէս, անոնք որ քաղաքին մէջ ծանօթներ կամ ազգականներ ունին կրնան անոնց ապաւինել, իսկ մնացեալներուն համար կառավարութիւնը մասնաւոր արարատնարան մը յատկացուցած է, ուր առժամապէս պիտի պատսպարուին չքաւոր գաղթականները :

Եւ՝ ազատ :

Երազ էր արդեօք : ոչ ոք չ'պիտի հետապնդէր մեզ, դաշոյն, ընկուզէր, ճոկան չէին սպառնար մեր գլխուն :

Իրօք, կենքի պայմանին այս յեղակարծ փոփոխումը որքան աւելի նոյնքան տարօրինակ կը թըւէր ինծի : Հազիւ քանի մը ժամ ուսն հեռաւորութիւն իրարմէ կը բաժնէր կառավարութիւն մը որ մարդախոշոշ է և կառավարութիւն մը որ մարդասէր է անհունապէս : Եւ իր զարմանալին : այս երկու հակոտնեայ կառավարութիւններէն ալ հազիւ տասնհինգ տարի հեռու (կառախումբով) կը հանգչին Եւրոպական այն մեծագոր աւերութիւնները, որոնք ինքզինքնուն համար կ'ըսեն թէ չափազանց քաղաքակրթեալ են, բարոյական ու մտաւորական ճոխութիւններով զարգացած, ուսման և գիտութեան գաղթականէն հասած եայլն, եայլն, չքեղ բաներ վերջապէս, որոնք սակայն արգելք մը չեն ըլլար որ իրենց թիւին տակէն արեւան տաք տաք հեղեղներ վազին, իրենց սկանչին ներքեւ աղիողորմ սրտակեղիք հեծիւններ ու կոծեր արձկուին, ու իրենց աչքերը՝ քաղաքակրթութեան պղտոր ակնոցովը զննուած՝ վայրագութեան ամենէն զարհու

րելի տեսարանները գիտեն անքրթիթ ու անզգած :

Թուք և մուր տոսնկ անգութ ու անկարեկիր քաղաքակրթութեան, մտքի և բարքի տոսնկ անօգուտ վարդացման : Այս քաղաքակրթութիւն բաւը այսուհետեւ սապէս սահմանելու է : Եւ ինչ զգացումներու չքացում, մարդասիրտ կան պայմաններու բացարձակ անհետացում :

Պատիւ ուրեմն Պուլկարիոյ, պուլկար ժողովրդեան և մանաւանդ Պուլկարիոյ վեհանձն ու բարեացակամ իշխանին որ այս տխուր վայրկեանին ապացուցեց թէ ինք հարազատ շառաւիղն է Եւրոպիոյ ամենէն հին աքքայական տան, և թէ իր երակներուն մէջ գեռ կը վազէ Պուրպուրներու ապստամբական արիւնը :

Եւ օգուտ կը քաղեմ՝ այս առիթէն՝ ի դիմաց հայ գաղթականութեան Պուլկարիոյ շնորհակալութիւն յայտնելու համար նաեւ վառնայի ինչպէս նաեւ Ռուսոնքի բնիկ հայ տարրին որ իր փախտական և հալածեալ եղբայրներուն հանգստութեանը ու պաշտպանութեանը համար ջանք չ'իյնալիս թէ՛ բարոյապէս թէ՛ նիւթապէս :

Մինչեւ հիմա աւելի քան տասն երկու հազար Հայեր գաղթած են Պուլկարիո, և հաւանօրէն քիչ ժամանակուան մէջ այս թիւ յանգի մօտ քսան հազարի : Ինչ որ բուռական ստուար գաղթականութիւն մը կ'ենթադրէ : Սա իրաւ է թէ յառաջիկայ ձմրան եղանակի խստութենէն պիտի չափազանց տառապին գաղթականներն, որոնք մեծագոյն մասամբ զբաղման յոյժ աննախանձելի վիճակ մը ունին : ասոր համար գաղթականներու հոգածութեան գործը ստանձնող յանձնախումբը հիմակուց պէտք է փութայ միջոցներ ձեռք առնելու որ սուրէ և կրակէ խուսափող անտէր անթիւկունք ժողովուրդ մը անօթութեան և ցուրտի զոհ չ'երթայ : Սակայն իրենց հանգչեցող տրուած այս հոգածութիւնը թող ծուլութեան և անփութութեան գրգիւ մը չ'ըլլայ մեզ գաղթականներու համար : Գեռ ցրտաւ շունչ քամին չ'իջած փութանք ինքզինքնիս պարտկելու՝ անշուշտ սրչափ որ կը ներէ մեր նիւթական ու բարոյական ուժը : Երբ մենք մեր ձեռքէն եկածն ընենք մեր բարօրութեանը և հանգստութեանը համար, թէ՛ բարեւէր անձերու ստանձնած գործին դժուարութիւնը կը թեթեւցնենք և թէ անոնք որ ճշմարտապէս կարօտ են հանրային գթութեանը՝ իրենց իրաւացի բաժինը լիապէս կը ստանան տրուած նպատակն :

Վհատելու բան չ'իկայ : Եւ իստող ձեռք չ'ի խորշիւր անօթութեանէ : Եւ միտքի և սիրտի այս հանգարտութեամբ քիչ շատ կարելի է ապրուստ ապահովող զբաղում

մը ունենալ : Եւ եթէ անփութագ անցընենք սա ձմեռը, տարակոյս չ'իկայ որ Պուլկարիոյ հայ գաղթականութիւնը՝ իր անմիջելի ճարպիկութեանը և իր յաջող կարողութիւններուն շնորհիւ պիտի կըրնայ յաւէտ կամ նուազ բարգաւաճ վիճակ մը ձեռք բերել քիչ ատենի մէջ մինչեւ որ եւրոպեան գիւտնագիտութիւն ըսուած տարօրինակ խառնաշփոթ մեքենան բարեհաճի վերջնական ուղղութիւնը տալ այս մեր հալածական այլ անընկճելի ազգի վիճակին :

Ե.

ԱՆՆԱՅ ԵՒ ԻՐ ԳԻՒՂԵՐՈՒՆ ՎԵՐՋԻՆ ԿՈՏՈՐԱԾԸ (ՄԱՍՆԱԻՐՆԵՐՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԷ ՔԱՆՈՒՍԾ)

Կոտորածին որոշեալ օրէն առաջ շրջակայ գիւղերէն բազմաթիւ թուրքեր և ֆիւրաեր թէ քաղաքին և թէ ամենէն մօտ գիւղերուն թուրք և բնակիչներու տունները կը հաւաքուէին և իրենց տրուած հրահանգին համեմատ կ'սպասէին կոտորածը սկսելու հրամանին :

Հայերը նշմարելով կոտորածի նախապատրաստութիւնները, քուսնիցս կառավարութեան գիմած և պաշտպանութիւն խնդրած էին ընդդէմ խուժանին : Թուրք պաշտօնեայք կապահովէին զիրենք թէ բնաւ վախնալու բան մը չ'կար :

Սեպտ. 3/15, շաբաթ առաւօտ Հայերը չհամարձակելով իրենց խանութները բանալ, իրենց տունները քաշուած էին : Բայց Գայմազաւը մունետիկի միջոցաւ հրամայեց անոնց՝ բանալ խանութները և յայտարարեց թէ Սուլթանի շնորհիւ ամեն ոք անգործ սրտով կրնայ իր գործով զբաղել :

Մեր ազգակիցներու համար լարուած ծուլակ մ'էր այս կարգադրութիւնը, որուն շատեր զոհ գնացին : Եւ ինչ օրը թուրքերէ և ֆիւրաերէ բազկացեալ խուժանը գրեթէ ժամ 6 ին, ցերեկի նստաւ զը ընելէ յետոյ, կրօնամոլութեամբ բորբոքած՝ սուրբով, բերբով և կացիններով նախ յարձակեցաւ շուկայի Հայոց վրայ և սկսաւ ջարդել : Թշուաւ զոհերուն կողմէն ոչ մի աղաչանք, ոչ մի պաղատանք, ոչ մի խոստում ընաւ օգուտ մը չ'ունեցաւ : Կատալութիւնը յիմարացուցեր, անբանացուցեր էր կոտորողները : Վարդեցիին ու Վարդեցիին անխնայ, անյապ : Թեոյ կարգը եկաւ տուններու մէջ սարսափահար ապաստանողներուն, զոր նոյնպէս գլխատեցին, խողխողեցին և գընդակահար սպաննեցին իրենց մայրերուն, քոյրերուն և աղջիկներուն աչքին առջիւ, տուններուն կամ փողոցներուն մէջ : Նկուղներու և այլ ծածուկ տնջեր պահուածներն ալ մեծ մասամբ չ'կրցին ազատիլ և չարաչար մեռան :

Վերի թաղի կանանց հրամայեցին երթալ հաւաքուիլ գերեզմանատունը և ապա սկսան կողոպտել :

Կողոպտուող տիւեց 2-3 օր և աւելոր յաջորդեց հրճութիւնը : Աննկարագրելի էր տեսարանը : ողջ մնացողներու վայնասունը, անմեղ մանուկներու սրտաճմիկ ճիչերը, բացերու ահաւելի տեսքը, այրող շէնքերու ճարճատու մը և փողոցներու մէջ նետուած հողեվարքն, լու խորդիւնները ոչ զբոլով, ոչ լիզուով կրնան պատմուիլ : Հապախնչ քստմեղի անբարոյականութեան զոհ գնացին գերեզմանատան կանանց և աղջկանց պարկեշտութիւնն ու պատիւը : ամենախայտառակ սրիկայութիւնները բաւական չսեպելով, խումբ մը վայրագ գազաններ կանանց մէջէն գտնեցին, առին տարին զանոնք ու լեռները քաշուեցան : . . .

Մօտ 1500 հայ տուններէն միայն 120ը հրդեհէն ազատած են, որովհետեւ թուրք թաղին մէջ, կամ թուրք տուններու կից էին : սակայն անոնք ալ կողոպտուեցան : Միւսնոցներու թիւը 1500-2000 կը հաշուուի : Եկեղեցիներն ալ կողոպտեցին ու անոնց փայտաշէն մասերը այրեցին :

Ակնայ գիւղերը, Կարուշլա, Բինիկան, Կամարակապ, Կաւմա, Զիւմաւա, Լիճք, Էւն. որ անցեալ տարի արդէն խուժանի ուղեւորութիւնն ընդունած էին, կողոպտուեցան և զոհեր տուին թշնամոյն սուրին :

Միայն Կամարակապի մէջ 22 հոգի ջարդուած են :

Ակնայ և իր գիւղերու հայութիւնը ոչ մի մոխրի վրայ նստած է : ոչ բնակարան ունի, ոչ ուտելիք, ոչ հագնելիք : Թուրքին սուրէն ազատուած Հայերը յառաջիկայ ձմեռ անօթութենէ և ցուրտէն ջնջուելու փոանդին մէջ են :

Սմբատ :

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

Կ. Պոլիս 2 Հոկ.

Մեր քաղաքը կը պարպուի : Ցոյցէն ի վեր Պոլսէն գաղթող մեկայն Հայերուն թիւը մօտ 30,000 կը հաշուեն : գաղթականութեան հոսանքը կը սկսի քշել նաեւ Յոյներն, Եւրոպացիներն ու մինչեւ անգամ թուրքերը, որք աւելի ապահով կը նկատեն թուրքիոյ այն քաղաքները, որոց բնակչաց մեծամասնութիւնը Յոյն է : Հայերուն համար գաղթելու գլխաւոր շարժառիթն է նոր ցոյցի և նոր կոտորածի մը վախը, իսկ օտարազգիներուն համար այդ վախէն աւելի՝ ապրելու դժուարութիւնն է : հոս ամեն խելահաս մարդիկ համոզուած են որ այսուհետեւ այս երկրին մէջ անկարելի պիտի ըլլայ ապրելու կանոնաւոր միջոցներ ճարել և թէ պէտք է երթալ, հաստատուիլ օտար երկրներ : Քաղաքիս ամենէն բանուկ հրապարակներուն վրայ իսկ շատ վաճառատեղիներ փակ կը մնան : բացերուն ալ առևտուրը այն

քան աննշան է որ իրենց օրական ծախքերը գոցելու համար իսկ գրամ չեն կրնար ձեռք ձգել: Լաւ գրամ կը շահին միայն անոնք որ իրենց պաշտօնին կամ գործին բերմամբ կրնան օգտուիլ գաղթող բազմութիւնէն, որ չարաչար կը հարստանան: Ոչ միայն թուրք պաշտօնատէսներ, բայց ևս ինքնաձեռն ծաքանակ գրամ կը շորթին, այլ և մեր ազգ. Պատրիարքարանը անսովոր հասոյթ մ'ունի այժմ ճամբու քէնքէններէ: Եւ Տեղապահը այս գաղթականութեան, ժողովրդային ընդհանուր թշուառութեան և ձերբակալութեանց հոնգէպ այնքան անպատկառ անհոգութիւն մը ցոյց կուտայ որ գրեթէ գոհունակութեան կը մօտենայ և որ վաղածառթ Բարթոլոմէոսէ մը անգամ չէր սպասուեր: Մարդը քան ըզթուրքն թուրք է. շատ դժուար է զինք տեսնել և կարելի չէ իրեն դիմում մը ընել, խորհուրդ մը հարցնել, օգնութիւն մը խնդրել, որովհետեւ չընկալուած է լրտեսներէ, որ ամեն ինչ իսկոյն կը տեսնեն և անորոշութեան: Գաւառներն ալ գրեթէ դադարած են իրենց ցաւերը և վիճակը նկարագրող և դարման հայցող սովորական հանրագիրներն ու տեղեկագիրներն Պատրիարքարան զրկելէ:

Ի չգոյէ գրամի այս տեղ մնալու ստիպուած Հայերուն վիճակը յուսահատական է. օրէ վաստակող և օրէ ապրող այս դատակարգը ինքզինք անկարող կը տեսնէ հացի ստակը ձեռք բերելու՝ առևտուրի ընդհանուր դադարման և միանգամայն այն պատճառով որ Հայերը իսլամ տարրէն կը մերժուին, կը վախճուին ամեն տեղ և ամեն առիթով, կառավարութիւնը մէկ կողմէ կը հռչակէ թէ 1895 ի բարենորոգմանց ծրագիրը պիտի գործադրուի բոլոր կայսրութեան մէջ, միւս կողմէ՝ ձերբակալութիւնները կը շարունակուին. բանտերը և բանտի տեղ ծառայող շէնքերը լի են Հայերով: Չորբակալուելէն յետոյ արձակուողներուն թիւը շատ քիչ է: Արիկ էֆէնտի Ունիսի տակաւին բանտն է, յիզափոխականներուն դրամով օգնած ըլլալու ամբաստանութեամբ, որուն ոչ ոք կ'ուզէ հաւատալ, ամբաստանեալին ծայրահեղ պահպանողականութիւնը հանրաժանութ ըլլալով: Ճշմարիտ է սակայն որ Արիկ էֆէնտի կառավարութեան հակակրօնութիւնը իր վրայ հրաւիրեց՝ ժամանակին մերձեցնելով անդամակցիլ այժմեան խառն ժողովին, որ կոչուած էր Բարթոլոմէոսը տեղապահ ընտրելու. շատ տարածուած կարծիք մ'ալ սա է թէ ելեմուական նկատողութիւններ քննելու խաղաղած են այս ձերբակալութեան մէջ: Նոյնպէս բանտարկեալ են տակաւին հանրաժանութ ազգայիններէն Եզնիկ Եպիսկոպոս, Տիարք Խ. խօրասանճեան, Գ. Պաղտատեան, Յարութիւն Նուրատունեան ևայլն:

Վանի որ այս վիճակը յարատեւ է, սարսափի, ձերբակալութեան և աղքատութեան վերաբերեալ լուրերէ զատ նորութիւն մը մի սպասէք այս քաղաքէն, ուր կեանք ու շարժում չկայ այլ եւս:

Խուլ գոգոհութիւնը կը տարածուի նաեւ թուրք շրջանակներումէ: Երկուստադր թուրքերու թիւը կը ստուարանայ. սօֆիստներուն մէկ մասն այլ անոնց յարած է. կայ նոյնպէս խելահաս թուրքերու դասակարգ մը որ արդէն Սաուանի կոտորածէն իվեր հակառակ է Դրան: Հայոց նկատմամբ բռնած քաղաքականութեան և որոյ թիւը հետզհետէ կ'աճի. այս մարդիկ բուսական զօրաւոր են իրենց դիրքով և ազդեցութեամբ, սակայն քաջասրտութիւնը բոլորովին կը պակսի իրենց. կառավարական սարսափը կը գատակարանէ զիրենք խորին լուսթիւն պահելու և իրենց կարծիքն ու զգացումները միայն վստահելի քրիստոնէսայ մօտերիմներու ակամօն ի վար փափալու: Նուազ գոգոհ չեն բնականաբար պաշտօնեայնեան ու պաներն, որք կը տեսնեն որ այսուհետեւ իրենց շատ և շատ դժուար պիտի ըլլայ ամսաթուղի ստանալ: Մէկ խօսքով ինձ այնպէս կը թուի թէ շարքող ու կողպատող խուժանէն և խելքով ու զգացումով իրեն հաւատարմող սինքլար դասակարգէն զատ՝ ամեն ոք գոգոհ է մեր հայակոտոր կառավարութիւնէն:

Ահա ձեզ Պոլսոյ վիճակին մէկ հարեւանցի պատկերը, որ կրնայ ձեր խորհրդածութեան առատ նիւթ մատակարարել, եթէ ուզէք այս երկրին տագնապին վրայ հեռատես ակնարկ մը ձգել:

Ա. Ա.

ԼՕՐՏ ԽՕԶՊԵՐԻ
ԵՒ
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Ազատական կուսակցութեան նախկին առաջնորդը, որոյ այս պաշտօնէն հրաժարիլը արդէն ծանուցիւք, իր հրաժարագրին մէջ կըսէ.

«... Հայկական խնդրոյ մասին անհամաձայնութեան մէջ կը գլուխդ անկողնուան կուսակցութեան մէկ նշանակելի մասին հետ. իմ կարծիքները կընդհարին Պ. Կլաւսովի տեսութեանց հետ, որ պարտի միշտ անբաղդատելի հեղինակութիւն մը ունենալ կուսակցութեան վրայ ու ոչ մէկէ մը կը ստանում ինձ հարկաւոր աշակցութիւնը: »

Ըզրտ Ռօզպէրի իր հրաժարէն յետոյ ճառ մը արտասանեց չորս հազար ունկնդիրներու առջեւ, որոց մէջ կային խորհրդարանի բաղմաթիւ անդամներ և նախկին նախարարներ: Առնախօսը ըսաւ թէ հայկական յուզումը անգլիական ազգային ոգւոյն կենդանութեան մէկ ապացոյցն է. սակայն

պէտք չէ որ անգլիական քաղաքականութիւնը Սուլթանի գործերէն առաջնորդուի: Պաշկարական խժդժութեանց ժամանակ Ռուսիա մեր կողմն էր, իսկ հիմայ ընդհակառակը մեզ դէմ է: Պէտք է ուրեմն այժմեան կառավարութեան նուիրել մեր աշակցութիւնը: Կ. Պոլսոյ անկարգութիւնները անխտելի կերպով թուրք կառավարութեան վերագրելի են, բայց առաջարկուած դարմանները անօգուտ կամ վտանգաւոր են:

Առնախօսը կը յայտարարէ թէ ինք համակարծիք չէ Պ. Կլաւսովի Սինգլիական գեապանը Պոլսէն ետ կանչելու մասին, որովհետեւ այդ կերպով Անգլիա պիտի զրկուի Սուլթանին վրայ ազդեցութիւն գործելու ամեն միջոցներէ: Պ. Ռօզպէրի չուզեր նաեւ որ Անգլիա սպառնալիքներ ընէ թուրքերոյ, կամ ետ քաշուի, վերջին ընթացքը նուստացուցիչ ըլլալով Անգլիացոց համար: Պէտք է պահել կիպրոսը: Բոլոր տեսութիւնները որոշած ըլլալով զիմագրել Անգլիոյ գործողութեան, առնախօսը կը մերժէ ամեն քաղաքականութիւն, որ կրնայ եւրոպական պատերազմի մը առաջնորդել:

ԹՐԳԱԿԱՆ ԵԼԵԻՄՈՒՏԸ

Սեմաֆօր լրագրին կը գրեն Պոլսէն.

«Շատ նեղ է ժամանակը, որովհետեւ կառավարութիւնը կը շարունակէ գաւառներու մէջ, ուր անխելականութիւնը հետզհետէ կը ձգտի հանրային իշխանութեանց տեղն անցնել և ելեմուական տագնապը այնքան մեծ է որ օսմ. վարչութիւնը մօտ է ծիրաւութիւնէ կուշիւ: Մայիսին ստիպողաբար կը պահանջէ 3 1/2 միլիոն ոսկի՝ ամենէն անխուսափելի պէտքերը հոգալու համար, բայց ոչ ոք գիտէ թէ ուրիշ գտնելու է այդ ստակը: Պահ մը յոյս կար որ կարելի պիտի ըլլայ Ֆրանսայի մէջ փոխառութիւն մը կնքել շնորհիւ Ռուսիոյ միջամտութեան Հանրապետութեան կառավարութեան մօտ, որ իր ազդեցութիւնը պիտի բանեցնէր ելեմուական քանի մը հաստատութեանց վրայ, որպէս զի օսմ. գանձին օգնութեան հասնին: Բարիկէն ստացուած պատասխանը բնաւ թույլ չէր տար այս սաւին սին յոյսեր տածել: Ներկայ ելեմուական տարիին սկիզբէն, Մարտ 1/18 էն իվեր կառավարութեան քաղաքային պաշտօնեաները երկու կամ երկուքուկէս ամսական միայն ստացան: Չինուորները աւելի շատ յետեւող թողնելներ ունին ստանալիք և մաւրաշխտ Շաքիր բաշա կարինէն, վանէն և վիայէի ուրիշ կեդրոններէ կը հեռագրէ որ եթէ իրեն անմիջապէս չի զրկուի 50, 70 կամ 80 հազար ոսկի, զինուորները պիտի ցրուին և խմբերու բաժնուած պիտի կողպատեն այն կողմերը:

Նոյն իսկ այստեղ սկսան սպաներու քայլերները կտրատել: Մինչեւ հիմայ կառավարութիւնը համարձակած չէր քայլերներուն

դաշիւ, որոց շնորհիւ սպաները կրնային ապրել և իրենց ընտանիքը ապրեցնել, թէեւ ամսաթուշակ չի ստանային:

Այժմ Սպարապետութեան հայթայթիչները յայտարարած ըլլալով որ ալ պիտի դադրեցնեն իրենց հայթայթումները, եթէ իրենց մեծագումար պահանջներուն հաշուոյն գոհացուցիչ թերթմաներ չի ստանան, հարկ եղաւ քայլերները ամենափոքր քանակութեան իջեցնել: Կան նաեւ թայիններ, որ բոլորովին ջնջուեցան: Այսպէս զինուորական դպրոցին սպաներուն քայիւրը դադրեցաւ և նոքա ստիպուած են ուտել աշակերտներուն սովորական ճաշը, որ զինուորներու կերակուրէն շատ չը տարբերի:

Իրաւունքի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Չ. Ս. Ախալցխա - Ստացած ենք ձեր նամակը և 5 ֆո. վեցամսեայ բաժնեգիրն:

Պէտք կը տեսնեք ձեզ տալ բաժնորդագրութեան վերաբերեալ բացատրութիւն մը, որ գուցէ ուրիշ բաժնորդներու համար ալ կարեւոր ըլլայ:

Իրաւունք այս տարւոյ սկիզբէն մինչեւ փետրուարի վերջը հրատարակուեցաւ իր երկշաբաթաթիւթ, որոյ տարեկան բաժնեգիրն Պոլսկարիոյ համար 6, իսկ արտասահմանի համար 8 ֆո. էր:

Փետրուարի վերջը՝ աղետալի հրդեհի մը ճարակ եղան թերթին գրերն ու գործիները: Նոր գրերուն հայթայթումը արտակարգ դժուարութիւններու բաղխեցաւ, որք դրամի և երկար ժամանակի մը զորոտ պատճառեցին մեզ: Այնպէս որ գրեթէ երեք ու կէս ամիս դադրելէ յետոյ, Իրաւունք սկսաւ վերահրատարակուիլ իբր չարաթաթերթի ինչպէս կը փափաքէին բաժնեգիրները:

Երկշաբաթաթիւթին շարաթիւթի վերածմամբ լրագրական ծախքերն ու խմբագրական աշխատութիւնը կրկնապատկուեցան: Բայց որովհետեւ թերթը 3 1/2 ամիս չհրատարակուեցաւ, և այսպէս մեր աշխատութեան տարին 8 1/2 ամիս իջած էր (մէկ ամիս հաշուելով յունուարն ու փետրուարը, ուր 4 թիւեր միայն լոյս տեսան) չէինք կարող վերոյիշեալ բաժնեգիրը կրկնապատկել և ներկայ 1896 տարեշրջանի բաժնեգիրն որոշեցինք 8 ֆո. Պոլսկարիոյ և 10 ֆո. արտասահմանի համար, ինչպէս գրուած է լրագրիս ճակատը և ինչպէս յայտարարած ենք մեր թերթին 5. թիւին մէջ:

Ռուբին ձեր զրկած 5 ֆոանքի փոխարէն իրաւունք ունիք մեր թերթը ստանալու 4 1/4 ամիս:

Ս. Գ. Ռուսուք. - Ստացանք ձեր նամակը. տեղիդ թերթերը ժամանակին նամակատան յանձնած ըլլալով, զիմեցինք անմիջապէս այստեղի թղթատարական վարչութեան և ստուգեցինք որ Ռուսուքի թերթերը հինգշաբթի օր զրկուած են ասկէ. ստիպուեցանք հեռագրել տեղիդ թղթատարական վարչութեան, որ կը յուսանք թէ մեր խնդրանքի համաձայն արժանք տնօրինած է թերթերը իրենց հասցէներուն անյապալ յանձնելու համար:

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻՅԵ

Ասորի նամ Աթինա կապիտալը
նրա Սթանպուլում աշխարհը մալի-
ման կէօրէ, էրմէնի մագնուն-
լար վէ մահապալար ափով Բատի-
չահիյէ նայիլ օլաճաղար ըմըշ:

Էշքիալարն Սեօլէզտէն աշըր-
մըշ օլաղարը Աստորիալը Զըսթ-
գօ նամ գաւորնն աւքէրէր թա-
րափնտան գաթլ օլընտըղըն է-
վէլքի նուսիւնիդտէ հաղմըշ իտիք-
իմոի էլչինին թալէպի իւղէրինէ
Պապը Ալի մագթուլէնին վարիս-
լէրինէ 8000 օսմ: լիւսալը թաղմի-
նաթ վէրէճէկինի վառ իթմիշ
իսէ տէ, էլչի օնունէ իգթիֆա
իթմէյուպ թէքրար Հազգը բաշա-
նըն վէ միրալայ Եուսուֆ պէյին
մէճմուրիյէթմէն թարա օլընմա-
սընը իտտաա իթմէքտէ իմիշ:

Սօն կիւնլէրտէ Սթանպուլում հէր
սընըֆա աիտ թիւրքլէրին խաշիշլէ
բէք չօգ բէվթլէրէր սաթըն ալ-
մագտա օլաղարը մահէլինտէն
հաղըյօրլար:

Վարնայա հիճրէթ իթմիշ օլան
էրմէնիլէրին թէպալիլ գըյաֆէթ-
լէ, թիւրքիոյա կերուպ իթմի-
լալ չըգարաճաղարըն միւպէյին
Սաւրաղաճման պիր էմիրնամէ
Սէրասթրէ վէ պաշրիյէ վէ գապ-
թիլէ նալըրլարն կէօնտէրիւպ-
պալ պապտէ լաղըմ կէլէն թէտա-
պիրի ինթիյաթփարանէյէ տըգ-
գաթ օլընմաւորն էմր վէրիլտիյինի
Աթմա Պալպաւիք պիւտիլիյօր:

Տեղապաշ Բարթոլմէոս Սուլ-
թանն հուլուրոնա գապուլ օլու-
նարագ, Ունճան Արիկ էֆէնտի-
նին իսթիլաւսըն իսթիւրհամ էյ-
լէմիշ: Սուլթան տախի միւմբին
օլաղը տէրէճէտէ իգթիգասընն
իճրասընը վառ իթմիշ տիր:

Կէլէն սէնէ Սնաուլուն ալթը
վիւյալէթլէրի իչին գապուլ օլը-
նան իսթիւրհամ մէմալիքի օսմա-
նիյէտէ ումուլէն իճրա օլընաճա-
ղը հազգընտա ախիլէն սուտուր
իտէն իրաա միւմբիլինճէ տախի-
լիյէ նաղըրընն ինյասէթի թահ-
թընտա թէշէքթիլ իտէն գօմիսի-
օն վալիլէրէ իւրթիսթիյան մուա-
վինլէր ինթիլապը իլէ մէշղուլ
պուլունըյօր:

Սթանպուլում իթալիա սէֆի-
րի Պապը Ալիէ պիր շէտիտ նօթա
վիւրուպ, Սթանպուլ իսթիլալընտա
իթալիա թէպալաւսընտան պիր կէն-
ճին բէսմի բուպա լապիս պիր մէ-
մուրտան հէրէ վուրըլըպ գաթլ օ-
լընմաւոր հազգընտա հիւքիւմէ-
թին տըգգաթընը տալէթ իթմիշ
վէպու տալէթին պու կիւնէ գա-
տար թէէիլիլ լաղըմ կէլէն պիր-
հան ու տէլիլէրի էլտէ իթմէք
մագթէտինէ մէպին օլաղըրըն պէ-
յանիլէ, պու ճինայէթին կէլէն սէ-
նէ Եէնիճէ Գալէ մանասթըրընտա
Սալվաթօր նամ բահիպին թիւրք

աւքէրէր թարափնտան գաթ-
լընա պէնգէր օլաղըրըն վէ գըր-
կընարաա գապըթմանն զիմէտ-
իսէլ օլմասընա տաիր ալթը սէ-
ֆիլլէր թարափնտան միւմթէ-
ֆիպէն վէրիլէն նօթալարն մաա-
լընը թասպիպ վէ թէպէյին իթ-
տիկինի սէրտ էլլէմիշ վէ իթալիա
տէվէթի նամընա միւմբիլիլէրին
թտհթը միւմագաթա տընմալարը-
նը վէ թագմիւնթ իթասընը թա-
լէպ իթմիշ տիր:

Սթանպուլում վիէննաւտան ալ-
տըղը մալիւմաթա կէօրէ, Բուս
միւմթէյալիգանընտան պիր գաթ-
Չար հաղըթլէրինին Բարիլէ ա-
ղիմէթի իլէ հէնի հուսուպ կէլէն
ահվալը սիյասիյէնին իգահը իչինն,
Բուսիա սալիր տէվէթլէրէ պիր
պէյաննամէ թէպիլիլ իտէճէք տէ-
միշ տիր:

Պու պէյաննամէ էվրուրալ թէ-
էմին իթմէք մագաթի իլէ վէրիլ-
ճէք վէ իսթիլիլ նաղըրընն գալ-
մագաթը Ս. Շիշկինին Պէրլինն
կիթմէսի տախի պու մէսէլէյէ տաիր
իյալահաթ վէրմէք իչինն տիր:

Հայտ Բարգտա (Լօնտրաա)
ֆէվզէլաա պիր միթինիլ թէշէքիլ
օլընուպ, 20 - 30000 հաղըրոնուն
թիւրք հիւքիւմէթինէ գարը կէօս-
թէրտիլի իւրը ու հիտտէթ վէ
էրմէնիլէր հազգընտա իպրազ էյ-
լէտիկի հիւննի թէվէճէիւհաթ բէք
չիտտէթիլ պիր սուրէթտէ թէլաղ-
ըր օլունմուշ տիր:

Մէսմուլթա նաղարէն Սթան-
պուլում թի Օսմանլը պանքասը իշ-
լէրինի չէքմէքտէ վէ եէտինտէ
պուլունն ֆօնտօլարըն պիր գըս-
մընը Աթինայա եօլլամըշ օլուպ,
հաղընէն Սթանպուլում գաղգա-
ճագ ըմըշ:

ՏԱԽԻԼԻՑԵ

Չար հաղըթլէրինին Ֆրանսայա
աղիմէթինին զիքի իչին, Ֆէխա-
մէթիլի Բրէնա Ֆէրտինանտ Հաղ-
րէթլէրի Սօֆիաաթի Բուս վէ
Ֆրանսըգ գօնտօլոսիւնէլէրի մէ-
մուրլարընա նիշանլար իհասն իթ-
միշ տիր:

Սապըգ վիւքէլա բէյիսի Ս-
Սթանպուլում գաթլընտան տօ-
լայը իթհամ օլընան էլլաւսըն մու-
հաքըմէսի կէլէն հաթթա իճրա
օլընաճագ տը իսէ տէ, շահիւլէ-
րին էքսէրիսինին հաղըր պուլըն-
մաուրղարը սէպէպի իլէ մուհաք-
քէմէ վագթը ախիլէ պըրագըրմըշ
տըր:

ՊՈՒ ԿԻԻՆՔԻ

ԹԷԼԷԿՐԱՖԻԱ

(Աթմա Պալպաւիք)

Սթանպուլ 19 Հոկ.
Պօմպա աթմագ ճիւրմիլ իլէ 5
էքմէնի իտամ ճէգասընա մահքիւմ
օլաղար:

Կիրիտտէ Ժանտարմալար թէշէքիլ
իթմէք մէմուրիլէթիլլէ թէճէմիւ-
իտէճէք օլան գօմիսիօնա 3 աղա
թալին իթմէք իչինն պու կիւն
էլչիլէր մէճլիս իթտիլէր:

Իսկէնտէրիէտէ 800 նէֆէր հէնի
աւքէրէր էվլէրէ հիւքիւմ իտուպ,
պաղչէլէրի իսարապ իթտիլէր: Կի-
րիտ սուլարընտա պուլընան պիր
Ֆրանսըգ հարպ սէֆինէսի ֆրան-
սըգ թէպալարըն մուհաֆագասը
իչինն իսկէնտէրիէյէ կիթտի:

Ֆարբերգտէքի գօնտօլարըն
վէրտիլէրի բարօրթլար սեպ. 15 տէ
էկինտէ վուգու պուլան գըրկըն
հազգընտա շու կիպի մալիւմաթ
վիւրիյօրլար: Սթանպուլում չէքի-
լէն պիր թէլէկրաֆըն էրմէնիլէրին
հէնի իսթիլալ չըգարաճաղընը
պիւտիլմէսի իւղէրինէ վէ մահէ-
լինտէ իթթիլալ օլընան թէտալիլ-
լէր սէպէպի իլէ թիւրքլէր թէշվիգ
օլընարագ 1150 պապ էրմէնի էվ-
լէրինտէն 980 էվ քիւմիլէն մահվ
ու հաղմա իթմիշլէր, 2000 էրմէնի
գըրմըշլար վէ պունլարտան դարը
վէ չօնուք 50 նէֆէրի աւքէրէր
Սուրաա նէհրինէ (Եփրաա գետ)
աթմըշլար տըր:

Պունտան մաաաա, շու գըրկընա
էրմէնիլէր սէպէպիլլէթ վէրտիլէր
տէյիւ, բաթրիգիւնէյէ իսթապէն
վէրիլէն թէլէկրաֆը բարապարա
ճէպրէն իմպալաթմըշլար: Ճիվար-
տա պուլընան 2 քէօյալէն 80 էր-
մէնի էօլտիւրմիւշլէր տիր:

Տիւն Պէյ օլընտա իքի գապ-
թիլլէ գաթլ օլընտը. էրմէնիլէրտէն
հէնի իսթիլալ գուհուր իթմէսին
տէյու չօղարը տէրտէսթ իտուպ
հապս իթտիլէր:

Տարմըշլար 19 Հոկ.
Չար իլէ կէօրիւշմէք իչինն իմ-
բէրաթօր վիլլէլմ սաաթ իքիտէ
պուրայա հէթիշտի:

Բարիլ 19 Հոկտ.
Թիւրք ֆօնտօլարըն լիգիտա-

սիսը սէպէպի իլէ ֆիյաթլարը ու-
մուլէն գըրըլտը:

Բէթէրապուրկ 19 Հոկտ.
Ժուռնալ տը Ս. Բէթրապուրկ,
Բուսիանն հէնի պիր իսթիգրալ
իտէճէկինն տաիր չըգան հաֆաթի-
սի թէքլիպ իսիյօր:

ԶԱՄԻՐԵ ԲԻԱՑԱՍԸ

Վառնա 9 Հոկտեմբեր

Պոպուս
Վալիօն, 57-59, 50 լիպր. հէքթօլ-
10, 40-10, 95 ֆրանք
Արապա, 57-61 լիպրա, հէքթօլթը
10, 60-11, 50 ֆրանք

Արքա
44-46 լիպրա, հէքթօլթը, 4,80-5,20
Ֆաստիլա
100 օգ. 28-32 ֆր. (մալա կէօրէ)
Նարօլէն 20,40 ֆր. հիսապը իլէ
Կիւնտէ 40-50 վալիօն վէ 4-500
արապա պուլտայ իլէ 30-40
արապա արքա ինէքտէ վէ ֆա-
սուլիա բէք աղ կէլմէքտէ տիր:

Ա Ձ Դ

“ԻՐԱՒՈՒՆՔ”-ի վարչութիւնը
յանձն կառնու պատրաստել Հա-
յիլէն, Պուլկարիլէն, Ֆրանսերէն
և Յունարէն լեզուներով ընկա-
լագրիր, հասցէներ, նամակագրու-
նէր, մահապալար, յայտարարու-
թիւններ, հարօաննաց և այլ հրա-
ւիրագրիր, այցաբարտիր են, են:

Գներ չափաւոր
Փափագողք պարտին դիմել իմ-
բագրութեան հասցէին:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎԵՏԻԿԵԱՆ

ԵՒ ԸՆԿ.

ՇԻՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱԹՈՒՆԵՐՈՒ

Օթէլ Տօպրիլի քով, քիշ 763

Սոյն նորահաստա Գործարանը
կը խոստանայ յաճախորդներն գո-
հացնել իր հաստատուն գործերով
և չափաւոր գներով:

ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ

ՌՈՒՍ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՍԵՒ ԾՈՎԻ ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ԳԻԾԸ

2 շաբաթ 1 անգամ

Մեկնում Օտէսաէ. 23 Մայիս. 6 և 20 Յունիս. 4 և 18 Յուլիս.
1, 15 և 29 Օգ. 12 և 26 Սեպ. 10 և 24 Հոկ. 7 և 21 Նոյ. 5 և 19 Դեկ.

ՄԵԿՆՈՒՄ	ԺԱՄԱՆՈՒՄ
Օտէսաէ Հինգ. Ժամ 4, կէս օրէ ետք.	Ի Վառնա. Ուր. երեկոյ
Վառնաէ. Ետք. » 8 առաւօտ.	» Պուլկաղ. Եր. Ժամ 4 կէս օրէ ետք
Պուլկաղէն » յիս առաւօտ. գործը.	» Կ. Պուլիս. կիր. առաւօտ

ՎԵՐԱԴԱՐՁ

Մեկնում Կ. Պոլսէ - 28 Մայիս, 11 և 25 Յունիս, 9 և 23 Յուլիս.
6 և 20 Օգոս. 3 և 17 Սեպ. 1, 15 և 29 Հոկ. 12 և 26 Նոյ, 10 24 Դեկ.

Կ. Պոլսէ, Գշ. Ժամ 2. կէս օրէ ետք.	Ի Պուլկաղ. Դշ. առաւօտ
Պուլկաղէ, Դշ. յիս առաւօտ. գործող.	» Վառնա » կէս օրէ ետք
բայց ոչ առաւօտ. Ժամ 8 և առաւ.	» Օտէսա Ուր. արշալուսին
Վառնաէ. Դշ. յիս առաւօտ. գործող.	
բայց ոչ երեկ. Ժամ 7 և առաւ.	